համարում ամբողջ Նուխու գաւառում և փոքրահասակ երեխայից սկսած մինչև զառամեալ ծերունին զէնք գործածել, աւազակ և արիւնարբու մարդասպան Թուրքին սարսափեցնել և տեղն ու տեղը պատժել՝ շատ լաւ գիտեն։ Նուխու ամբողջ գաւառի զանազան գիւղերում, շաբաթը մի-մի օր տօնավաճառ է լինում, ուր երկրի ամեն տեսակ բերքերի առուծախս է լինում, ահագին բազմութիւն է հաւաքւում։ Հարկաւ բազմութեան մեծ մասը լինում են Թուրքեր, որ շատ անգամ մոլեռանդ Մահմէդի անզուսպ զաւակները՝ օր ցերեկով ծաղր ու ծանակ են դարձնում քրիստոնեայի կրօնքն ու հաւատը, որից ծագում են ընդհարումներ և կռիւներ հայերի և Թուրքերի միջև։ Այդպիսի դէպքերի ժամանակ, եթէ միքանի տասնեակ նիժեցիներ պատահեն, անպայման յաղթանակը փոքրաթիւ հայերի կողմն է մնում։ Բայց Նիժի տօնավաճառի ժամանակ եթէ Թուրքը համարձակուի քրիստոնէական կրօնի մասին անարգ մի խօսք ասել, այն ժամանակ վայն է եկել Թուրքերի գլխին։ Բաւական է, որ խիզախ ու անվախ նիժեցիներից մէկն ու մէկը իւր բռունցքը բարձրացնէ օդի մէջ և՝ «արա բէշ վիչի դուղ»—այ մեր եղբայր խփիր» գոռայ։ Կայծակի արագութեամբ, մէկ էլ կտեսնէք, որ հարիւրաւոր նիժեցիներ, միասիրտ ու մի հոգի, հարիւրաւոր Թուրքերի քիթ ու պռունկ ջարդելով և գլուխներ պատռելով, արիւնլուայ արին նրանց։ Կարծէք թէ՝ «մէկը հազարի և հազարը մէկի համար» հրաշալի սկզբունքը